«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հաստատված է«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի Խորհրդի կողմից
(Արձանագրություն թիվ 10 առ 01.10.2009թ.)

ԱՐԺԵՔՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն պայմանները մշակված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի» և այլ իրավական ակտերին համապատասխան:

1.2. «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն (այսուհետ՝ Ապահովագրող կամ Ընկերություն) իրականացնում է արժեքների փոխադրման ապահովագրություն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն դասով:

1.3. Սույն պայմաններով կիրառվող հիմնական հասկացությունները

Ապահովագրության պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) - Ապահովագրողի և Ապահովադրի միջև համաձայնություն, որի գործողության ընթացքում Ապահովագրողը պարտավոր է ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում (բացառությամբ՝ սույն Պայմաններում նախատեսված բացառությունների) ապահովագրական գումարի սահմաններում հատուցում վճարել Ապահովադրին (կամ Շահառուին), իսկ Ապահովադիրը պետք է վճարի ապահովագրության պայմանագրում հաշվարկված ապահովագրավճարը նշված չափով, կարգով և ժամկետներում;

Ապահովագրող - «Սիլ Ինշուրանս» Ապահովագրական փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ նաև Ընկերություն), որն իրականացնում է ապահովագրական գործնեություն և օրենքով նախատեսված այլ գործունեություն՝ համաձայն լիազորված մարմնի կողմից տրված լիցենզիայի:

Ապահովադիր - օրենքով նախատեսված ցանկացած կազմակերպաիրավական ձևի իրավաբանական անձ, օտարերկրյա կազմակերպություն:

Շահառու - ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում ապահովագրական Պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող անձ:

Ապահովագրության օբյեկտ - ապահովագրման ենթակա գույքային շահերը:

Ապահովագրական ռիսկ - ապահովագրման ենթակա հնարավոր պատահար, որը կարող է տեղի ունենալ Պսայմանագրի գործողության ընթացքում, որը կրում է հանկարծակի և պատահական բնույթ:

Ապահովագրական պատահար - պատահար, որի ի հայտ գալու դեպքում (բացառությամբ սույն Պայմաններում նախատեսված դեպքերի) Ապահովագրողը պարտավորվում է վճարել Ապահովադրին կամ Շահառուին ապահովագրական հատուցում սույն պայմաններում և Պայմանագրում նշված կարգով:

Ապահովագրական հատուցում (այսուհետ՝ Հատուցում) - ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ընկերության կողմից ապահովագրության պայմանագրի հիման վրա Ապահովադրին կամ Շահառուին վճարման ենթակա գումար՝ դրամական արտահայտությամբ կամ համարժեք գույքով:

Ապահովագրական գումար - Պայմանագրի գործողության ժամանակահատվածի ընթացքում ապահովագրության պայմանագրով նախատեսված Ապահովագրողի պատասխանատվության առավելագույն չափը:

Ապահովագրավճար - Պայմանագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար:

Աշխատակից - Ապահովադրին ծառայություն մատուցող անձը, ով առաջնորդվում և վերահսկվում է Ապահովադրի կողմից:

Տարածքներ - Ապահովագրության օբյեկտի գտնվելու վայր(եր)ը, երբ այն չի գտնվում փոխադրման վիճակում, ինչպես նշված է Պայմանագրում:

2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

2.1. Սույն պայմաններով ապահովագրման ենթակա են փոխադրվող արժեքները, մասնավորապես՝

- դրամ
- տարադրամ
- մանրադրամ
- ոսկու ձուլակտոր
- ցանկացած տեսակի թանկարժեք մետաղներ և դրանցից ցանկացած տեսքի և տեսակի պատրաստված իրեր/առարկաներ
- թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր
- բաժնետոմսերի վկայականներ
- պարտատոմսեր
- կտրոններ և արժեթղթերի այլ տեսակներ
- բեռնագրեր
- պահեստային ստացականներ
- չեկեր
- դրաֆտեր/վճարագրեր
- փոստային դրամական փոխանցումներ
- կտրոններ և պարենային կտրոններ
- ապահովագրական պայմանագրեր

- այլ փոխանցելի կամ ոչ փոխանցելի դրամական միջոցներ և պայմանագրեր, որոնցում Ապահովադիրն ունի շահ կամ որոնց համար Ապահովադիրը կրում է պատասխանատվություն:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

Ապահովագրական պատահար

3.1. Ապահովագրական պատահար են համարվում հետևյալ գործողությունները.
3.1.1. գողություն, կողոպուտ կամ նման գործողությունների փորձ, որին կապ կամ մասնակցություն չունի Ապահովադրի որևէ աշխատակից,
3.1.2. ցանկացած անձի կողմից անկանխամտածված կամ անփույթ գործողությունների կամ անգործության հետևանքով ապահովագրված գույքին հասցված ֆիզիկական վնաս կամ կորուստ, անկախ այն հանգամանքից, թե այդ անձը Ապահովադրի աշխատակից է, թե՝ ոչ,
3.1.3. նախորդ 2 կետերից տարբեր ցանկացած անձի կողմից որևէ գործողություններ կամ անգործություն , անկախ այն հանգամանքից, թէ այդ անձը Ապահովադրի աշխատակից է, թե՝ ոչ, կամ գործողություններ կամ անգործություն ինչում այդ անձը կապ կամ մասնակցություն ունի:
3.1.4. Վերը նշված երեք կետերից տարբեր այլ վթար կամ պատահար:
Սահմանափակվում է Պայմանագրում նշված պատասխանատվության սահմանով, անկախ այդպիսի վնասի կամ վնասների իրական չափերից և անկախ այն հանգամանքից, թե այդպիսի վնասի կամ վնասների պատճառը կամ պատճառները 3.1.1.-3.1.4. (ներառյալ) կետերից որևէ մեկի կամ մի քանիսի սահմաններում են:

Ապահովագրական ռիսկ

3.2. Արժեքների փոխադրման ապահովագրությունն իրականացվում է 2 բաժիններով

3.2.1. Բաժին Ա - *Տարածքներ*
Սույն պայմաններով ապահովագրությունը ծածկում է ապահովագրության օբյեկտին հասցված ֆիզիկական վնասը կամ կորուստը՝ ապահովագրական գումարի սահմաններում, երբ գույքը Պայմանագրի գործողության ընթացքում գտնվել է Պայմանագրով նախատեսված տարածքային սահմաններում և ենթակա է հետևյալ բացառություններին, կարգավորման հիմքերին և պայմաններին:

3.2.2. Բաժին Բ - *Փոխադրումներ*
Սույն պայմաններով ապահովագրությունը ծածկում է ապահովագրված գույքին հացված ֆիզիկական վնասը կամ կորուստը Ապահովագրական գումարի սահմաններում, ինչը առաջացել է զրահապատ մեքենայի, մայթեզրի կամ ԱԳՄ ռիսկերի ի նհայտ գալու արդյունքում, և երբ գույքը Պայմանագրի գործողության ընթացքում գտնվել է Պայմանագրով նախատեսված տարածքային սահմաններում և ենթակա է հետևյալ բացառություններիոն, կարգավորման հիմքերին և պայմաններին:

3.2.2.1. ***Զրահապատ ավտոմեքենայի ռիսկ*** - ապահովագրված գույքին հասցված ֆիզիկական վնաս/կորուստ, երբ այն գտնվել է զրահապատ ավտոմեքենայի ներսում:

3.2.2.2. ***Մայթեզրի ռիսկ*** - Ապահովագրվող գույքի ֆիզիկական վնասի կամ կորուստի ռիսկը (երբ այն գտնվում է տարածքներից դուրս և երբդա ԱԳՄ ռիսկ չէ), երբ աշխատակիցը այն տեղափոխում է Ապահովադրի կողմից գործարկվող զրահապատ մեքենայից կամ դեպի զրահապատ մեքենա կամ դեպի հաճախորդը (հաճախորդի նշանակած անձը) կամ հաճախորդի մոտից (հաճախորդի նշանակած անձի մոտից):

3.2.2.3. ***Բանկոմատի (Ավտոմատ Գանձման Մեքենա) ռիսկ*** - ապահովագրվող գույքի ֆիզիկական վնասի կամ կորուստի ռիսկը, հետևյալ հանգամանքներից որևէ մեկում՝
- այն պահից, երբ աշխատակիցը դուրս է բերում ապահովագրվող գույքը Ապահովադրի կողմից գործարկվող զրահապատ ավտոմեքենայից՝ ԱԳՄ-ն վերալիցքավորելու նպատակով, մինչ այն պահը, երբ լիցքավորվող ԱԳՄ-ն փակվում և կողպվում է և ԱԳՄ-ից դուրս բերվող ապահովագրվող գույքը տեղափոխվում է զրահապատ մեքենա:
- այն պահից, երբ աշխատակիցը բացում է ԱԳՄ-ն սպասարկման համար, մինչ այն պահը, երբ այն փակվում և կողպվում է:
- հաջորդում է կամ առաջացել է ԱԳՄ-ն բացելու նպատակով Ապահովադրից գողացված բանալիների ոչ լիազորված օգտագործմոն դեպքում:

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Սույն ապահովագրությունը չի ծածկում ցանկացած կորուստ կամ վնաս, որի պատճառ է հանդիսացել կամ որն առաջացել է՝
4.1.1. բնականոն հնացման, աստիճանաբար մաշվածության, սկզբնական դեֆեկտի, ժանգոտման կամ օքսիդացման, ցեցերի կամ այլ վնասատուների պատճառով,

4.1.2. ցանկացած վերանորոգման, վերակառուցման, գունափոխման կամ այլ նմանատիպ գործողության պատճառով,
4.1.3. չորության, խոնավության, լույսի կամ տատանվող ջերմաստիճանի ենթարկելու պատճառով, եթե միայն տվյալ կորստի կամ վնասի պատճառ չի հանդիսացել հրդեհը, կայծակը, պայթյունը, փոթորիկը, ջրհեղեղը կամ երկրաշարժը:

4.2. Ռադիոակտիվ Վարակման, Քիմիական, Կենսաբանական, Կենսաքիմիական և Էլեկտրոմագնիսային Զենքերի Համապարփակ Բացառության Դրույթ
/Սույն դրույթը կլինի գերակայող և առոչինչ կդարձնի սույն ապահովագրության մեջ առկա՝ դրան հակառակ որևէ դրույթ/
Սույն ապահովագրությունը ոչ մի դեպքում չի հատուցի կորուստը, վնասը, պատասխանատվությունը կամ ծախսը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատճառվել, ուղեկցվել կամ բխում է հետևյալից.

4.2.1.1. իոնացնող ճառագայթումներ կամ ռադիոակտիվ վարակում՝ պայմանավորված որևէ միջուկային նստվածքով կամ հեղուկով կամ դրա բռնկմամբ,
4.2.1.2. ռադիոակտիվ, թունավոր, պայթուցիկ կամ այլ վտանգավոր կամ վարակակիր նյութեր, որոնք ունեն միջուկային կառուցվածք կամ պարունակում են ռեակտոր կամ այլ միջուկային նյութ կամ տարր,
4.2.1.3. որևէ զենք կամ միջոց, որը ներառում է ատոմային կամ միջուկային արտանետուկ և/կամ միաձուլում կամ նման այլ հակազում կամ ռադիոակտիվ ուժ կամ սկզբնաղբյուր,
4.2.1.4. ռադիոակտիվ, թունավոր, պայթուցիկ կամ այլ վտանգավոր կամ վարակակիր նյութեր:
Սույն ենթադրույթի բացառությունը չի վերաբերում ռադիոակտիվ իզոտոպներին, բացի միջուկային հեղուկներից, երբ նման իզոտոպները պատրաստվում, տարվում, պահեստավորվում կամ կիրառվում են առևտրային, գյուղատնտեսական, բժշկական, գիտական կամ այլ խաղաղ նպատակներով:
4.2.1.5. որևէ քիմիական, կենսաբանական, կենսաքիմիական կամ էլեկտրոմագնիսական զենքեր:
4.3. Համակարգչային Հարձակման Բացառության Դրույթ
4.3.1. Ենթարկվելով միայն 4.3.2. կետին՝ սույն ապահովագրությունը ոչ մի դեպքում չի հատուցի կորուստը, վնասը, պատասխանատվությունը կամ ծախսը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատճառվել, ուղեկցվել կամ բխում է որևէ համակարգչի, համակարգչային ցանցի, ծրագրավորումների, կեղծ կոդավորումների, վիրուսների կամ ծրագրերի կամ այլ էլեկտրոնային համակարգերի կիրառումից, եթե դրանք օգտագործվում են որպես վնաս պատճառելու միջոց:
4.3.2. Եթե սույն դրույթին կցվի որևէ հավելված պայմանագիր, որը կհատուցի պատերազմը, քաղաքացիական պատերազմը, հեղափոխությունը, հեղաշրջումը, ընդհարումները կամ դրանցից բխող քաղաքացիական հուզումները կամ որևէ պատերազմող կողմի դեմ կամ կողմից իրականացվող թշնամական գործողությունները, ապա 4.3.1. դրույթը չի բացառի կորուստները (որոնք այլ կերպ հատուցելի կլինեին), որոնք բխում են որևէ համակարգչի, համակարգչային համակարգի կամ ծրագրավորման կամ որևէ այլ էլեկտրոնային համակարգի կիրառումից և/կամ տեղեկատվական համակարգի և/կամ որևէ զենքի կամ «հրթիռանետի» փչացնող մեխանիզմի կիրառումից:
4.4. Կորուստ կամ վնաս, որի ուղղակի կամ անուղղակի պատճառ է հանդիսացել կամ որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ծագել է Ապահովադրի որևէ սեփականատիրոջ (շահառու կամ այլ), տնօրենի, պաշտոնյայի կամ աշխատակցի, գործակալի կամ բաժնետիրոջ (շահառու կամ այլ) անազնվության կամ գաղտնի պայմանավորվածության հետևանքով, որոնք գործել են միայնակ կամ այլ անձանց հետ համագործակցելով:
4.5. Փխրուն առարկաների կոտրում, եթե միայն նման կոտրումը չի ծագել հրդեհի կամ գողության արդյունքում:
4.6. ԱԳՄ-ի գույքի կորուստ կամ վնաս, եթե միայն տվյալ կորուստը չի արձանագրվել Ապահովադրի կողմից ԱԳՄ-ն լիցքավորելու, և/կամ դրանից սպասարկվելու ժամանակ:
4.7. Ցանկացած կորուստ կամ վնաս, որ ծագել է չհսկվող մեքենաներից:
4.8. Խորհրդավոր/անբացատրելի անհետացում կամ այլ անբացատրելի կորուստ:
4.9. Կորուստ կամ վնաս, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ծագել է պատերազմի, հարձակման, թշնամության կամ պատերազմանման գործողությունների /անկախ այն բանից, պատերազմ հայտարարվել է, թե ոչ/, քաղաքացիական պատերազմի, ապստամբության, հեղափոխության, բողոքի, զանգվածային իրարանցման, ռազմական դրության, բռնագրավման, կամ օրենքով սահմանված Իշխանության գործողության հետևանքով:

4.10. Ահաբեկչության Բացառության Դրույթ (Մետաղադրամ)

4.10.1. Չնայած սույնում կամ որևէ հավելվածում առկա՝ հակառակը պնդող որևէ պայմանի՝ սույնով համաձայնեցվում է, որ սույն ապահովագրությունը բացառում է ցանկացած բնույթի կորուստը, վնասը, ծախսերն ու ծախքերը, որոնք ողղակիորեն կամ անուղղակիորեն ծագել կամ առաջացել են ահաբեկչական որևէ գործողության պատճառով կամ դրա առնչությամբ՝ անկախ այն բանից, տվյալ գործողությունն ուղեկցվել է արդյոք կորստի հետ կապված որևէ այլ պարագայով, թե ոչ:
4.11. Սույն բացառությունը չի կիրառվում
1. եթե կորստի անմիջական պատճառը ապահովագրության առարկայի գողությունն է, կամ
2. երբ ապահովագրության առարկան գտնվում է փոխադրման ընթացքում՝ համաձայն ստորև շարադրվածի:

4.11.1. Սույնով հասկացվում է, որ ցանկացած բնույթի կորուստը, վնասը, ծախսերն ու ծախքերը, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատճառվել կամ առաջացել են ահաբեկչական որևէ գործողության ղեկավարման, կանխարգելման, ճնշման առնչությամբ կամ որևէ այլ կերպ, բացառվում են:
4.11.2. Սույն դրույթի նպատակով հասկացվում է, որ «ահաբեկչական գործողություն» նշանակում է գործողություն, որը ներառում է, բայց ոչ միայն, ուժ, բռնություն և/կամ դրանց սպառնալիք՝ որևէ անձի կամ անձանց խմբ(եր)ի կողմից, ովքեր գործում են ինքնուրույն կամ որևէ կազմակերպության կամ կառավարության անունից կամ դրանց հետ կապված՝ քաղաքական, կրոնական, գաղափարական կամ նման այլ նպատակներով՝ ներառյալ որևէ կառավարության վրա ազդեցություն գործելու և/կամ հասարակությանը կամ հասարակության որևէ զանգվածինվախ ներշնչելու նպատակները:
4.11.3. Սույն դրույթի նպատակներով «փոխադրում» նշանակում է ապահովագրության առարկայի փոխադրում ջրային, օդային կամ ցամաքային ճանապարհով: «Փոխադրումը» չի ներառում այն ժամանակահատվածները, երբ ապահովագրության առարկան գտնվում է պահեստում, ձեղնահարկում կամ կանգառում՝ սովորական փոխադրման կամ որևէ այլ դեպքում:
4.11.4. Այն դեպքում, երբ սույն հավելվածի որևէ մաս համարվի անգործադրելի կամ անուժ, մնացած մասերը կշարունակեն մնալ ամբողջապես գործադրելի:

4.12. Պատերազմի և Քաղաքացիական Պատերազմի Բացառության Դրույթ

4.12.1. Չնայած սույնում առկա՝ հակառակը պնդող որևէ դրույթի՝ սույն Պայմանագիրը չի հատուցում կորուստը կամ վնասը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատճառվում, պատահում կամ հետևանք է պատերազմի, բախումների, արտաքին թշնամիների գործողությունների, ընդվզումների (անկախ այն բանից՝ պատերազմ հայտարարվել է, թե ոչ), քաղաքացիական պատերազմների, հեղափոխությունների, հեղաշրջումների, ընդհարումների, զինվորական կամ զինված ուժերի կամ որևէ կառավարական, հասարակական կամ տեղական իշխանության կողմից կամ հրամանով իրականացող բռնագրավումների կամ ազգայնացման կամ բռնագանձման արդյունքում տեղի ունեցած գույքի ավերումը կամ վնասը:

5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

5.1. Պայմանագրում յուրաքանչյուր բաժնով նախատեսված ապահովագրության օբյեկտների ապահովագրական գումարները նշվում են առանձին տողերով:
5.2. Ապահովագրական գումարը սահմանվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ հիմք ընդունելով Ապահովադրի կողմից Ապահովադրին ներկայացրած դիմում-հարցաթերթիկը:
5.3. Պայմանագրում կարող են սահմանված լինել պատասխանատվության սահմանաչափեր (օրինակ. Պատասխանատվության առավելագույն սահմանաչափ յուրաքանչյուր բաժնի համար):
5.4. Յուրաքանչյուր ապահովագրական պատահարից հետո ապահովագրական գումարը նվազում է վճարված ապահովագրական հատուցման գումարի չափով: Սակայն, Ապահովադրի ցանկությամբ, ապահովագրական գումարը կարող է ավելանալ/վերականգնվել Ապահովագրողի կողմից հաշվարկված լրացուցիչ ապահովագրավճարի վճարման դեպքում:
5.5. Ապահովագրավճարի չափը սահմանվում է Պայմանագրով՝ Ապահովագրական գումարի նկատմամբ կիրառելով ապահովագրական սակագինը:
5.6. Ապահովագրավճարը կողմերի համաձայնությամբ կարող է վճարվել կանխիկ կամ անկանխիկ:
5.7. Ապահովագրավճարը պետք է վճարվի Պայմանագրում նշված կարգով և ժամկետներում:
5.8. Պայմանագրում նշված ապահովագրավճարի վճարման կարգը և ժամկետները խախտելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի չեղյալ համարել Պայմանագիրը:
5.9. Եթե Ապահովադրին հատուցում կատարելու ժամանակ ապահովագրավճարը լրիվ վճարված չէ, ապա Ապահովագրողը հատուցվող գումարը կնվազեցնի չվճարած ապահովագրավճարի չափով:

6. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

6.1. Ապահովագրողի և Ապահովադրի համաձայնությամբ Պայմանագրում կարող է նախատեսվել չհատուցվող գումար:
6.2. Չհատուցվող գումարը Ապահովադրի մասնակցության չափն է ապահովագրական հատուցմանը:
6.3. Չհատուցվող գումարը Պայմանագրում սահմանվում է դրամական արտահայտությամբ կամ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ:
6.4. Չհատուցվող գումարը Պայմանագրում յուրաքանչյուր բաժնի համար սահմանվում է առանձին-առանձին:
6.5. Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական:
6.6. Պայմանական չհատուցվող գումարի դեպքում Ապահովագրողն ազատվում է վնասի հատուցումից, եթե վնասի մեծությունը փոքր կամ հավասար է պայմանական չհատուցվող գումարին: Եվ կհատուցվի հասցված վնասը այնպիսի համամասնությամբ, ինչպիսին է ապահովագրական գումարը և բեռի արժեքը, եթե վնասի մեծությունը գերազանցում է պայմանական չհատուցվող գումարը:

6.7. Ոչ պայմանական չհատուցվող գումարի դեպքում Ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց սահմանված գումարի չափով:

7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ապահովագրության Պայմանագրի կնքումը և գործողության ժամկետները:

7.1. Պայմանագրի կնքման հիմք է ծառայում Ապահովադրի կողմից լրացրած Ապահովագրողի կողմից տրամադրած դիմում հարցաթերթիկը:

7.2. Պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով, երկու օրինակից: Անհրաժեշտության դեպքում կարող է կնքվել ավել օրինակներից:

7.3. Պայմանագրին կարող է փոխարինել նաև Վկայագիրը:

7.4. Պայմանագրին կից կարող են թողարկվել հավելվածներ, որոնք հանդիսանում եմ Պայմանագրի անբաժանելի մասը:

7.5. Պայմանագրի և/կամ Վկայագրի կորստի, վնասվածքի կամ ոչնչացման դեպքում Ապահովագրողը Ապահովադրի դիմումով վերջինիս կտրամադրի Պայմանագրի կրկնօրինակը:

7.6. Ապահովադիրը Ապահովագրողին պետք է հայտնի ապահովագրական պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու իրեն հայտնի հավանականության մասին:

7.7. Եթե Պայմանագրի կնքումից հետո պարզվել է, որ Ապահովադիրը սուտ տեղեկություններ է հայտնել ապահովագրական պատահարի ի հայտ գալու հավանականության որոշման համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին, ապա Ապահովագրողն իրավունք ունի Պայմանագիրը ճանաչել անվավեր և կիրառել ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածի 2-րդ կետով նախատեսված հետևանքները:

7.8. Պայմանագրի գործողության ժամկետները որոշվում են Պայմանագրով:

7.9. Պայմանագրի գործողությունը վաղաժամկետ կարող է դադարել

7.9.1. Ապահովադրի նախաձեռնությամբ՝ այդ մասին **ՈՉ ՊԱԿԱՍ, ՔԱՆ 15 ՕՐ ԱՌԱՋ** ծանուցելով Ապահովագրողին: Այս դեպքում Ապահովագրողը Ապահովադրին վերադարձնում է չլրացած օրերի համար ապահովագրավճարը համաձայն հետևյալ բանաձևի.

$Ա_վ = (Ա_պ - Հ_կ)*Պ_չ/Պ-5000$ ՀՀ դրամ

$Ա_վ$ - Ապահովադրին վերադարձման ենթակա ապահովագրավճար
$Ա_պ$ - Պայմանագրով սահմանված ապահովագրավճար
$Հ_կ$ - Ապահովադրին կատարած հատուցումների գումար
$Պ_չ$ - Պայմանագրի չլրացած օրերի քանակ
Պ – Պայմանագրով սահմանված գործողության օրերի քանակը
5000 ՀՀ դրամ - գործավարման ծախսեր

7.9.2. և՝ Ապահովագրողի, և՝ Ապահովադրի նախաձեռնությամբ, եթե մյուս կողմը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում՝ խախտումը հայտնաբերելուց եռամսյա ժամկետում: Ապահովադրի կողմից Պայմանագրի խախտման համար Ապահովագրողի նախաձեռնությամբ Պայմանագրի լուծման դեպքում Ապահովադրին չեն վերադարձվում ապահովագրավճարները:

7.9.3. Վերահսկման կամ Ապահովադրի սեփականության փոփոխման դեպքում, սույն ապահովագրությունը անմիջապես և ամբողջովին կդադարի: Վերահսկում հասկացությունը սույն պայմանում նշանակում է այն ուժը, որը որևէ միջոցով, ներառյալ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի սեփականության հիմունքներով, սահմանում է վերահսկող հոլդինգային ընկերության կամ Ապահովադրի կառավարումը կամ քաղաքականությունը: Ձայնի իրավունք տվող բաժնեմասերի սեփականության մեջ տեղի ունեցած փոփոխությունը, որը հանգեցնում է բաժնետիրոջ կամ բաժնետոմսերի 10 կամ ավելի տոկոս ունեցող բաժնետերերի դուստր կազմակերպության խմբի ուղղակի կամ անուղղակի սեփականությանը, կարող է սույն պայմանի նպատակներից առաջացնել վերահսկման փոփոխություն:

7.9.4. Այնուամենայնիվ, եթե Ապահովադ սեփականության կամ վերահսկման նման փափախությունից երեսուն օր առաջ Ապահովագրողին տրամադրում է գրավոր ծանուցում, ներառյալ տվյալ վերահսկման կամ սեփականության փոփոխմանը վերաբերող բոլոր համապատասխան տվյալներն ու մանրամասները, ապա Ապահովագրողը կարող է իր իսկ ցանկությամբ կամ շարունակել սույն ապահովագրությունը, սակայն իր պայմաններով կամ ընդհանրապես դադարեցնել այն:

7.9.5. երբ Ապահովադիրն անցնում է լուծարային կառավարչի, պետական կամ կառավարական մարմինների տնօրինության տակ:

7.9.6. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

8. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1. Ապահովադիրն իրավունք ունի՝

8.1.1. Ծանոթանալ սույն պայմաններին,
8.1.2. իր ցանկությամբ ընտրել Ապահովագրողի կողմից առաջարկվող ապահովագրական ռիսկերը,
8.1.3. Պայմանագիրը կնքել ի օգուտ այլ անձի (Շահառու),
8.1.4. Պայմանագրի կորստի, վնասվածքի կամ ոչնչացման դեպքում ստանալ Պայմանագրի կրկնօրինակ,
8.1.5. Ապահովագրական պատահարի ի հայտ գալու դեպքում պահանջել Ապահովագրողից կատարելու Հատուցում ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմաններով նախատեսված կարգով,
8.1.6. իրականացնել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ գործողություններ:

8.2. Ապահովադիրը պարտավոր է՝

8.2.1. պատշաճ կերպով կատարել Պայմանագրով ստանձնած իր պարտականությունները,
8.2.2. տեղեկացնել շահառուին, ապահովագրության օբյեկտի նկատմամբ շահագրգռվածություն ունեցող անձանց սույն պայմանների մասին: Նշված անձանց կողմից սույն պայմանանների չկատարումը կամ խախտումը դիտվում է որպես Ապահովադրի կողմից Պայմանագրի պայմանների չկատարում:
8.2.3. Պայմանագրում նշված կարգով և ժամկետներում վճարել ապահովագրավճարը,
8.2.4. ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները ապահովագրված գույքը լավ վիճակում պահելու և պահպանելու, ինչպես նաև տվյալ ապահովագրված գույքի ողջ հաշվապահական հաշվառումը իրականացնել այնպես, որ Ապահովագրողը կարողանա ճշգրտորեն գնահատել հավանական կորստի գումարի չափը,
8.2.5. Պայմանագրի կնքման ժամանակ հայտնել անհրաժեշտ և ստույգ տվյալներ ապահովագրվող գույքի մասին, ինչպես նաև հավանական իրադարձությունների մասին, որոնք նշանակություն ունեն ապահովագրական պատահարի ի հայտ գալու հավանականության որոշման համար:
8.2.6. Պայմանագիր կնքելիս Ապահովագրողին տեղեկացնել ապահովագրության օբյեկտի վերաբերյալ նույն ռիսկերից մյուս բոլոր ապահովագրական պայմանագրերի առկայության մասին,
8.2.7. անմիջապես, հենց որ նրան հայտնի դառնա, տեղեկացնել Ապահովագրողին ռիսկի բոլոր էական փոփոխությունների մասին:

8.3. Ապահովագրական պատահարի դեպքում՝

8.3.1. **ԱՆՀԱՊԱՂ**, բայց **ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ 72 ԺԱՄՎԱ** ընթացքում տեղյակ պահել Ապահովագրողին պատահարի մասին,
8.3.2. **ԱՆՀԱՊԱՂ**, բայց **ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ 72 ԺԱՄՎԱ** ընթացքում տեղյակ պահել պետական համապատասխան իրավապահ մարմիններին պատահարի մասին,
8.3.3. կազմի պատահարի ընդհանուր նկարագրությունը
8.3.4. չպետք է ընդունի որևէ պատասխանատվություն կամ չպետք է կատարի որևէ առաջարկ, խոստում կամ վճարում, կամ կատարի իրավական որևէ ծախս առանց Ապահովագրողի հետ նախնական գրավոր համաձայնության և պետք է Ապահովագրողին տրամադրի այնպիսի օժանդակություն, որը կարող է պահանջել Ապահովագրողը
8.3.5. չպետք է գործի ի վնաս Ապահովագրողի շահերի
8.3.6. պատահարի դեպքում ողջամիտ, անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել վնասների կանխման կամ նվազեցման համար, ինչպես նաև ապահովել իր իրավունքների և շահերի պատշաճ պաշտպանությունը այլ կողմերի հետ հարաբերություններում
8.3.7. Ապահովադիրը պետք է լրացնի և Ապահովագրողին ուղարկի **ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ՁԵՎԸ** (հայցային դիմում) հնարավորին չափ շուտ, սակայն ոչ ուշ, քան պատահարի տեղի ունենալու օրվանից **2 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ** ընթացքում: Ապահովադիրը կարող է ստանալ պահանջի ձևը Ապահովագրողից:
8.3.8. Ապահովագրողին հայտնել մեղավոր կողմից հատուցում ստանալու մասին
8.3.9. Ապահովագրողի պահանջով տալ լիազորագիր դատարանում կամ պետական այլ մարմիններում Ապահովադրի շահերի ներկայացման համար:

8.4. 8.2 կետում թվարկված ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ դեպքում Ապահովագրողն իրավունք ունի ՄԵՐԺԵԼՈՒ հայցի պահանջը:

8.5. Եթե Ապահովադիրը թաքցնում կամ սխալ է մեկնաբանում սույն ապահովագրության հետ առնչվող որևէ էական փաստ կամ հանգամանք, կամ եթե Ապահովադիրը հայց է ներկայացնում, իմանալով հանդերձ, որ այն

կեղծ է, ապա փաստերի նման թաքցնումը, սխալ մեկնաբանումը կամ պարզապես կեղծված գործողությունները կարող են հիմք հանդիսանալ սույն ապահովագրության դադարեցման և հայցի պահանջի մերժման համար:

8.6. Ապահովագրողն իրավունք ունի՝

8.6.1. զննել, գնահատել ապահովագրվող օբյեկտը
8.6.2. զննել, գնահատել ապահովագրված օբյեկտին հասցված վնասը
8.6.3. անձամբ հետաքննելու ապահովագրական պատահարի հանգամանքները կամ ներգրավելու այլ անձանց
8.6.4. Պայմանագրին կից հավելվածներ կնքելիս, անհրաժեշտության դեպքում, Ապահովադրից պահանջել լրացուցիչ ապահովագրավճար հավելվածում հաշվարկված գումարի չափով
8.6.5. Ապահովադրի կողմից Պայմանագրի խախտման դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին սույն պայմաններով սահմանված կարգով հայտնելով Ապահովադրին
8.6.6. Պայմանագիրը չեղյալ համարել, եթե Պայմանագրի կնքումից հետո պարզվի, որ Ապահովադիրը Ապահովագրողին ի սկզբանե հայտնել է սխալ տեղեկություններ կապված իրեն հայտնի հանգամանքների մասին, որոնք ունեն զգալի նշանակություն ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և դրանից առաջացած վնասների չափի որոշման համար,
8.6.7. Ապահովագրական ռիսկի մեծացումն առաջացնող հանգամանքների մասին տեղեկացվելուց հետո պահանջելու փոփոխել Պայմանագրի պայմանները կամ վճարելու ռիսկի մեծանալուն համաչափ լրացուցիչ ապահովագրավճար:
8.6.8. իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ գործողություններ:

8.7. Ապահովագրողը պարտավոր է՝

8.7.1. Ապահովադրին ծանոթացնել ապահովագրության պայմաններին,
8.7.2. Պայմանագրի կնքման ժամանակ Պայմանագրի և սույն պայմանների օրինակ տրամադրել Ապահովադրին,
8.7.3. Հայցի վերաբերյալ բոլոր անհարաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում հայցի կարգավորման մասին որոշում ընդունի՝ կազմելով այդ մասին համապատասխան եզրակացություն:
8.7.4. Հայցի բավարարման դեպքում ապահովագրական հատուցման վճարումը կատարել հայցի կարգավորման վերաբերյալ որոշման/եզրակացության ընդունման պահից 15 (տասնհինգ) օրվա ընթացքում,
8.7.5. Ապահովագրական հատուցման մերժման դեպքում կայացնել պատճառաբանված որոշում և հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքել Ապահովադրին (Շահառուին) նրա մշտական բնակության հասցեով,
8.7.6. չհրապարակել Ապահովադրի մասին տվյալներ, ինչպես նաև առևտրային, բանկային և օրենսդրությամբ գաղտնի համարվող այլ տեղեկություններ, որոնք Ապահովագրողին հայտնի են դարձել իր գործունեության արդյունքում, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ,
8.7.7. իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ գործողություններ:

9. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1. Ապահովադիրը պետք է շարունակի գործել համաձայն Հարցաթերթիկում լրացված կարգերի և չի կարող փոփոխել դրանք առանց Ապահովագրողի նախնական համաձայնության, քանի որ վնաս կհասցնի Ապահովագրողին:
9.2. Բոլոր գործառնությունները պետք է լինեն գործառնական բազայի ռադիոծածկույթի սահմաններում կամ բջջային հեռախոսների համակարգի ծածկույթում, իսկ բոլոր մեքենաներն ու գործառնական բազաները պետք է հագեցած լինեն լավ աշխատող ռադիոկապով կամ բջջային հեռախոսով:
9.3. Ցանկացած մեքենա, որը տեղափոխում է ապահովագրված գույքը, պետք է ունենա առնվազն երկու աշխատակից: Նրանցից գոնե մեկը պետք է զինված լինի:
9.4. Ցանկացած մեքենա, որով ապահովագրվող գույք է տեղափոխում, ներսում պետք է ունենա առնվազն մեկ աշխատակից, եթե, իհարկե, մեքենան չգտնվի ապահով և փակ տարածքում:
9.5. Ապահովադիրը պետք է ներդնի բոլոր հնարավոր ջանքերը, որպեսզի ապահովագրվող գույք տեղափոխող երկու կամ ավելի մեքենաները չկորեն կամ չվնասվեն գործառնական գրասենյակից հեռու նույն վայրում:
9.6. Ապահովադիրը պետք է հավաքի աշխատակիցների անձը հաստատող փաստաթղթերն ու համազգեստները, երբ նրանք ավարտում են աշխատանքը և հնարավորինս շուտ գրավոր կերպով տեղեկացնի բոլոր հաճախորդներին այդ մասին:

9.7. Զրահապատ Մեքենաներ

9.7.1. Ապահովադիրը ցանկացած փոխադրման համար պետք է օգտագործի զրահապատ մեքենաներ: Դրանք պետք է հավուր պատշաճի պահանվեն:

9.7.2. Զրահապատ մեքենայի վնասման կամ խափանման դեպքում Ապահովադիրը պետք է օգտագործի զրահապատ մեքենան միայն ապահովագրվող գույքը պահպանելու նպատակով՝ ավարտելով առաքումը կամ պարզապես տվյալ գույքը անվտանգ վայր տեղափոխելով:

9.7.3. Ոչ զրահապատ մեքենայի դեպքում, տեղափոխումը պետք է կատարվի հավելյալ զինված աշխատակիցների ներկայությամբ:

9.8. Մայթեզրի Ռիսկեր

9.8.1. Ապահովադիրը պետք է վստահ լինի, որ Մայթեզրի Ռիսկի ժամանակահատվածը և տարածքը հնարավորինս կարճ է:

9.8.2. Ապահովադիրը պետք է վստահ լինի, որ Մայթեզրի Ռիսկում ներառված ողջ ապահովագրվող գույքը գտնվում է զինված անձնակազմի անդամների անմիջական հսկողության տակ:

9.9. ԱԳՄ Ռիսկ

9.9.1. Ապահովադիրը պետք է վստահ լինի, որ ԱԳՄ Ռիսկում ներառված ժամանակահատվածը և տարածքը հնարավորինս կարճ է:

9.9.2. ԱԳՄ-ի գործառնությունները պետք է կատարվեն մեքենայից երկու անդամներից բաղկացած անձնակազմի կողմից:

9.10. ԱԳՄ-ին Օգտագործումը/ Ապահովադիրը պետք է վստահ լինի, որ ԱԳՄ մատչելիության միջոցները ոչ մի դեպքում ավելի չեն լինի Պայմանագրում նշվածից և չեն գտնվի տարածքներից դուրս՝ նույն փոխադրամիջոցում կամ նույն ԱԳՄ խմբում:

9.11. Անվտանգություն/Ապահովադիրը պետք է համապատասխանի բոլոր այն առաջարկություններին, որոնք պահանջում է Ապահովագրողը այնպիսի անվտանգության առումով, որն իրականացվում է սույն ապահովագրության ընթացքում սույնում սահմանված ժամանակահատվածում:

9.12. Հավատարմության Ծածկույթի Հավելում/72 Ժամյա Հավատարմության Ծածկույթ

9.12.1. Չնայած սույն ապահովագրության Բացառություն 4.3.՝ ապահովագրված գույքը ապահովագրված է նաև այն ֆիզիկական կորստից կամ վնասից, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատճառվել կամ խթանվել է Ապահովադրի որևէ աշխատակցի անազնվության կամ դավադրության արդյունքում՝ այն պայմանով, որ նման կորուստը կամ վնասը բացահայտվել է պատահելուց հետո 72 ժամվա ընթացքում: Շաբաթ, կիրակի և պաշտոնապես ոչ աշխատանքային օրերը չեն ներառվում բացահայտման ժամկետում:

9.12.2. Միայն սույն հավելումի նպատակով «աշխատակից» բառը կնշանակի Ապահովադրին ծառայություն մատուցող որևէ անձ, ով ենթակա է Ապահովադրի ուղղորդմանն ու ղեկավարությանը և նրա կողմից ուղղակիորեն վճարվում է աշխատավարձի կամ վարձատրությունների ձևով:

9.12.3. Միայն սույն հավելումի նպատակով «աշխատակից» բառը չի նշանակում.

ա) Գործակալ, բրոքեր, առևտրային միջնորդ, բեռներն ընդունող, անկախ կապալառու, ներկայացուցիչ կամ որևէ այլ անձ, ով զբաղեցնում է նույն կամ նման որևէ պաշտոն, կամ

բ) Ապահովադրի որևէ տնօրեն, սեփականատեր կամ գործընկեր:

9.12.4. Սույն լրացուցիչ ծածկույթը չի կիրառվի որևէ աշխատակցի հանդեպ, ում վերաբերյալ Ապահովադիրը կամ նրա որևէ գործընկերը կամ ղեկավարն այնպիսի տեղեկություն չի ստացել, ըստ որի՝ տվյալ աշխատակիցն իրականացրել է որևէ խարդախ կամ անազնիվ գործողություն՝ Ապահովադրի ծառայության կամ որևէ այլ պարագայում, անկախ այն բանից՝ նման գործողությունն իրագործվել է Ապահովադրի ենթակայության տակ անցնելուց առաջ, թե՝ հետո:

9.12.5. Բացի վերոնշյալից, հավելյալ ծածկույթը ենթակա է սույն ապահովագրության բոլոր պայմաններին, դրույթներին և բացառություններին:

9.13. Պահպանման Հոդված

9.13.1. Ապահովադիրը պետք է հավաստիացնի, որ բոլոր ֆիզիկական պահպանումները (որոնց մասին Ապահովագրողը տեղեկացված է), ներառված են, նույնիսկ գրասենյակային տարածքների չհսկվելու դեպքում կամ արտաաշխատանքային ժամերին:

9.13.2. Ապահովադիրը պետք է հավաստիացնի, որ Ապահովագրողներին տեղեկացված բոլոր տագնապի համակարգերը իրոք գործում են, նույնիսկ գրասենյակային տարածքների չհսկվելու դեպքում կամ արտաաշխատանքային ժամերին: Ապահովադիրը պետք է հնարավորինս շուտ տեղեկացնի Ապահովագրողներին, եթե որևէ համակարգ ինչ-ինչ պատճառով չի գործում: Բոլոր համակարգերը պետք է համաձայն պայմանգրի կանոնավոր կերպով սպասարկվեն համապատասխան ընկերության կողմից տարեկան առնվազն երկու անգամ:

9.13.3. Ապահովադիրը նաև պետք է հավաստիացնի, որ Ապահովագրողին հայտնի մեքենաների ողջ պահպանումը կատարվում է գործող կարգի համաձայն և հավուր պատշաճի:

10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՅՑԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

10.1. Ապահովագրական պատահար տեղի ունենալուց **ԱՊԱՀՈՎԱԴԻՐԸ** (Ապահովադրի կողմից լիազորած անձը, Շահառուն, ապահովագրոթյան օբյեկտի պահպանման մեջ շահագրգռվածություն ունեցող անձը) պետք է **ԱՆՀԱՊԱՂ,** սակայն **ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ 72 ԺԱՄՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ** տեղյակ պահի Ապահովագրողին:
10.2. Պատահարի ի հայտ գալու օրվանից **2 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ** Ապահովադիրը պետք է ներկայացնի հայցային դիմումը:
10.3. Ապահովագրված գույքի կորստի կամ վնասի դեպքում Ապահովադիրը պետք է Ապահովագրողին տրամադրի պահանջվող տեղեկատվություն և/կամ ապացույց, և ամբողջովին համագործակցի վերջինիս հետ հայցի ուսումնասիրման և կարգավորման ժամանակ: Եթե Ապահովագրողը պահանջի, Ապահովադիրը կենթարկվի քննության, երդմամբ՝ ի դեմս Ապահովագրողի նախանշած մարդուն և կորստի արձանագրումից հետո 60 օրերի ընթացքում ներկայցնի կորստի հավաստի ապացույց:
10.4. Ապահովագրական հայցին կից ներկայացվող հիմնական փաստաթղթերն են՝

- Պետական իրավասու մարմնի կողմից տրված դեպքի մասին արձանագրությունը/եզրակացությունը/տեղեկանքը (առկայության դեպքում),
- Վնասի չափը հավաստող փորձագետի եզրակացությունը (առկայության դեպքում),
- ՀՀ Օրենսդրությամբ նախատեսված և Ապահովագրողի պահանջով այլ փաստաթղթեր:

10.5. Ապահովադրի կողմից ներկայացրած յուրաքանչյուր հայցին կից ներկայացվող փաստաթղթի վրա Ապահովագրողը գրառում է կատարում ստացման ամսաթվի մասին:
10.6. Ապահովագրողին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու օրվանից 15 (տասնհինգ) օրվա ընթացքում Ապահովագրողը որոշում է ընդունում հայցի պահանջի բավարարման կամ մերժման մասին:
10.7. Հայցի պահանջի բավարարման դեպքում Հատուցման վճարումը կատարվում է հայցի կարգավորման վերաբերյալ որոշման ընդունման պահից 15 (տասնհինգ) օրվա ընթացքում:
10.8. Հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողը կայացնում է պատճառաբանված որոշում, որը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքվում է Ապահովադրին (Շահառուին) Պայմանագրում նշված հասցեով:

11. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔ)

11.1. Ապահովագրական պատահարի տեղի ունենեալու արդյունքում Ապահովադրին պատճառված վնասից բխող նրա (կամ շահառուի) պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է Ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի չափով:
11.2. Ապահովագրողն իրեն անցած պահանջի իրավունքն իրականացնում է Ապահովադրի (Շահառուի) և վնասների համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահմպանմամբ:
11.3. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցներ՝ հայտնելով Ապահովագրողի կողմից իրեն փոխանցված պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:
11.4. Եթե Ապահովադիրը (Շահառուն) հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքից, կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովադրի (Շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու վերադարձնել ավել վճարված հատուցման գումարը:

12. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

12.1. Պայմանագրում փոփոխություններ կատարվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:
12.2. Պայմանագրից և սույն Պայմաններից ծագող բոլոր տարաձայնությունները ենթակա են լուծման Պայմանագրում նշված և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
12.3. Սույն ապահովագրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:
12.4. Եթե դատարանը սահմանի, որ սույն պայմանագրի ցանկացած տերմին կամ դրույթ կարող է հակասել պետական տերմինին, ուր գտնվում է տվյալ դատարանը, ապա հիշյալ տերմինը կամ դրույթը պետք է մեկնաբանվի և/կամ փոփոխվի այնպես, որպեսզի համաձայնեցվի հիշյալ պետական տերմինի հետ: